Հայգազուն Հովաննես Թոփաքեան. կենսագրական ակնարկ

Թոփակյան Մարիամ Մ.
Երևանի պետական համալսարան, հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Հայաստանին հարակից և մերձավոր արտերկրի պետությունների ռազմավարական հետազոտությունների բաժին ավագ լաբորանտ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, ասպիրանտ (Երևան, ՀՀ)
https://orchid.org/0009-0005-4925-2158
mariam.topakyan@ysu.am

ՀՏԴ՝ 327; **EDN:** HDSTSF
DOI: 10.58587/18292437-2026.5-118
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ հայ Սփյուռքի պատմություն, միջազգային դիվանագիտություն, առևտրատնտեսական հարաբերություններ, պարսկա-ամերիկյան հարաբերություններ, մարդասիրական ու բարեգործական նախաձեռնություններ, մշակութային դիվանագիտություն, հասարակական գործունեություն

Айказун Оганнес Топакян: биографический очерк

Топакян Мариам М.
Старший лаборант Отдела стратегических исследований отношений сопредельных с Арменией государств и стран ближнего зарубежья Института арменоведческих исследований Ереванского государственного университета;
аспирант и преподаватель кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений Ереванского государственного университета (Ереван, РА)

Аннотация. В контексте изучения западноармянской общественно-политической истории конца XIX - первой четверти XX века особый интерес представляют деятели, сочетавшие экономическую предприимчивость, международный авторитет и высокое национальное самосознание. Среди таких фигур особое место занимает Айказун Топакян, чья многогранная деятельность охватывала торгово-экономическую, дипломатическую, общественную, культурную и благотворительную сферы. Несмотря на значимость его роли, жизнь и деятельность Топакяна до сих пор не получили всестороннего и систематического историографического освещения: существующие работы носят преимущественно биографический или мемуарный характер и ограничиваются отдельными эпизодами. Настоящая статья восстанавливает основные вехи его биографии - от текстильной торговли в Кесарии и Константинополе до создания в Нью-Йорке предприятия по импорту восточных ковров, организации персидского павильона на Колумбовской выставке 1893 года, назначения генеральным консулом Персии в Нью-Йорке, дипломатических подношений Белому дому и участия в гуманитарных инициативах в пользу жертв Аданской резни и Геноцида армян. Биография Топакяна рассматривается не только как история отдельной личности, но и как ценный источник для изучения формирования западноармянской деловой элиты, самоорганизации армянской диаспоры и её взаимодействия с международной дипломатической средой в первые десятилетия XX века.
Ключевые слова и словосочетания: история армянской диаспоры, международная дипломатия, торгово-экономические отношения, персидско-американские отношения, гуманитарные и благотворительные инициативы, культурная дипломатия, общественная деятельность

Haigazoun Hovhannes Topakyan: A Biographical Essay

Topakyan Mariam M.
Senior Research Assistant at the Department of Strategic Studies of Relations with Foreign Countries Adjacent and Close to Armenia, Institute for Armenian Studies, Yerevan State University;
Ph.D. Student and Lecturer at the Chair of International Relations and Diplomacy, Faculty of International Relations, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. In the study of Western Armenian social and political history of the late 19th and first quarter of the 20th century, particular interest attaches to figures who combined economic entrepreneurship, international standing, and a heightened sense of national responsibility. Haigazoun Topakyan occupies a distinctive place among such figures, his multifaceted career spanning the commercial-economic, diplomatic, civic, cultural, and philanthropic domains. Despite the significance of his role, Topakyan's life and work have yet to receive comprehensive, systematic historiographical treatment: existing references are largely biographical or memoir-based and confined to isolated episodes. This article reconstructs the principal stages of his career - from the textile trade in Kayseri and Constantinople to the establishment

of an oriental-carpet import firm in New York, the organization of the Persian pavilion at the 1893 World's Columbian Exposition, his appointment as Persian Consul General in New York, his diplomatic gifts to the White House, and his involvement in humanitarian relief for survivors of the Adana massacres and the Armenian Genocide. Topakyan's biography is presented not merely as the story of an individual but as a valuable primary source for understanding the formation of the Western Armenian business elite, the self-organization of the Armenian Diaspora, and its engagement with the international diplomatic sphere in the early decades of the 20th century.

Keywords & phrases: history of the Armenian Diaspora, international diplomacy, trade and economic relations, Persian-American relations, humanitarian and philanthropic initiatives, cultural diplomacy, public engagement

XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի արևմտահայ հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրության համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն գործիչները, որոնք, համադրելով տնտեսական նախաձեռնողականությունը, միջազգային հեղինակությունը և ազգային պատասխանատվության բարձր գիտակցությունը, իրենց գործունեությունը ծառայեցրել են ոչ միայն անձնական բարեկեցության ու հանրային ճանաչման, այլև հայ ժողովրդի քաղաքական, հասարակական ու մարդասիրական խնդիրների լուծմանը: Այդպիսի գործիչների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայգազուն Թոփաքեանը, որի բազմակողմանի գործունեությունն ընդգրկել է առևտրատնտեսական, դիվանագիտական, հասարակական, մշակութային և բարեգործական ոլորտները՝ նրան վերածելով իր ժամանակի առավել ազդեցիկ հայ անհատականություններից մեկի:

Թոփաքեանի գործունեությունը կարևոր տեղ է զբաղեցնում արևմտահայ և սփյուռքահայ հասարակական կյանքի պատմության մեջ, քանի որ այն արտացոլում է XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի այն գործընթացները, որոնց ընթացքում տնտեսական հաջողության հասած հայ գործարարներն աստիճանաբար վերածվում էին նաև հասարակական և քաղաքական ազդեցություն ունեցող գործիչների: Որպես հաջողակ ձեռնարկատեր ու Պարսկաստանի գլխավոր հյուպատոս՝ նա կարողացավ ձևավորել լայն միջազգային կապեր և հասարակական հեղինակություն, որոնք հետագայում ծառայեցրեց բարեգործական, ազգային ու մարդասիրական նախաձեռնությունների իրականացմանը: Նրա գործունեությունը ներառում էր արևմտահայության խնդիրների նկատմամբ հետևողական հետաքրքրությունը, օգնության ծրագրերի կազմակերպումը, միջազգային հանրության շրջանում հայկական հարցի լուսաբանումը, ինչպես նաև տարբեր ժողովուրդների և մշակույթների միջև համագործակցության խթանմանն ուղղված քայլերը, որոնք նրան դարձնում են ժամանակի ազդեցիկ հայ հասարակական գործիչներից մեկը:

Չնայած Հայգազուն Թոփաքեանի ունեցած նշանակալի դերակատարությանը՝ նրա կյանքն ու գործունեությունը հայ պատմագրության մեջ մինչ օրս չեն արժանացել համակողմանի ու համակարգված ուսումնասիրության: Գոյություն ունեցող անդրադարձերի մեծ մասը կրում է կենսագրական, հուշագրական կամ տեղեկագրային բնույթ և հիմնականում սահմանափակվում է նրա գործունեության առանձին դրվագների ներկայացմամբ: Մինչդեռ Թոփաքեանի գործունեությունը պահանջում է առավել խորքային պատմագիտական քննություն, քանի որ այն հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից լուսաբանելու արևմտահայ գործարար վերնախավի ձևավորման, սփյուռքահայության հասարակական ինքնակազմակերպման և միջազգային դիվանագիտական միջավայրի հետ հայ գործիչների փոխհարաբերությունների խնդիրները XX դարի առաջին տասնամյակներում: Այդ առումով Թոփաքեանի կենսագրությունը ոչ միայն մեկ անհատի գործունեության պատմություն է, այլև արժեքավոր սկզբնաղբյուր՝ արևմտահայության հասարակական կազմակերպման, ազգային ծառայության, բարեգործական նախաձեռնությունների և միջազգային ներկայացվածության առանձնահատկությունները բացահայտելու համար:

Հայգազուն Թոփաքեանը ծնվել է 1864 թվականի նոյեմբերի 5-ին Կեսարիայում՝ Հովհաննես և Տիրուհի Թոփաքեանների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Ավետիս Երիցյանի դպրոցում [**37**, 1926 հոկտեմբերի 14, էջեր 7-8], իսկ հետագայում ուսումը շարունակել է Պարտիզակի բարձրագույն վարժարանում, որը XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ կրթական կարևորագույն հաստատություններից էր ու նշանակալի դեր ուներ ազգային մտավոր վերնախավի ձևավորման գործում: Ստացած կրթությունը, օտար լեզուների իմացությունը և առևտրական միջավայրում ձևավորված փորձառությունը նպաստեցին, որ երիտասարդ տարիքում նա ներգրավվի ընտանեկան առևտրատնտեսական գործունեության մեջ: Հոր՝ Հովհաննես Թոփաքեանի հետ զբաղվելով տեքստիլի առևտրով՝ նա Օսմանյան կայսրությունում ձեռք բերեց գործարար և կազմակերպչական կարևոր փորձ, որն ընդլայնեց Կոստանդնուպոլսում հաստատվելուց հետո՝ հիմնելով սեփական առևտրական ձեռնարկությունը [**37**, 1926 հոկտեմբերի 14, էջեր 7-8]:

Տնտեսական գործունեության ընթացքում ձևավորված հնարավորություններն ու միջազ-

գային առևտրային կապերը հետագայում դարձան նրա հասարակական, ազգային և դիվանագիտական գործունեության հենասյուներից՝ հնարավորություն ընձեռելով նրան հանդես գալու ոչ միայն որպես հաջողակ առևտրական ու գործարար, այլև որպես ազդեցիկ հասարակական գործիչ, դիվանագետ և ազգային նախաձեռնությունների կազմակերպիչ:

Կոստանդնուպոլսում աշխատելու տարիներին Թոփաքեանը գործնական նպատակներով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Այնտեղ տիրող պայմանները նրա վրա այնքան բարենպաստ տպավորություն թողեցին, որ նա որոշեց Միացյալ Նահանգները դարձնել իր մշտական բնակության վայրը: Նա վաճառեց Կոստանդնուպոլսում ունեցած բիզնեսը, և իր հետագա աշխատանքային գործունեության ու բնակության վայր ընտրեց Նյու Յորքը:

Հայգազուն Թոփաքեանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ տեղափոխվելու ժամանակահատվածի վերաբերյալ սկզբնաղբյուրներում առկա են որոշակի տարաձայնություններ: Ամերիկահայ ներգաղթյալների հաշվառման փաստաթղթերում (կազմված Հայ ներգաղթյալների բարեկեցության ընկերության կողմից, որի գլխավոր քարտուղարը երկար տարիներ եղել է Հայգազուն Թոփաքեանի կրտսեր եղբայր Գևորգ (Ջորջ) Թոփաքեանը) [**37**, 1924 նոյեմբերի 7, էջ 5], նրա՝ Միացյալ Նահանգներ ներգաղթի թվականը նշվում է 1883 թվականը [**4**], մինչդեռ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի փաստաթղթային ժառանգության մեջ պահպանված համապատասխան նամակագրության տվյալներով նա Միացյալ Նահանգներ է տեղափոխվել 1887 թ. [**10**]: Թեև Թոփաքեանի՝ ԱՄՆ արտագաղթի ճշգրիտ թվականը դեռևս պահանջում է լրացուցիչ աղբյուրագիտական ճշգրտում, անվիճելի է, որ XIX դարի ութսունական թվականների վերջին նա մշտապես հաստատվել էր Նյու Յորքում, որտեղ սկսվեց նրա գործունեության նոր ու առավել նշանակալի փուլը:

Միացյալ Նահանգներում հաստատվելուց հետո Թոփաքեանը շարունակեց իր առևտրական գործունեությունը՝ այն վերածելով միջազգային ընդգրկում ունեցող կազմակերպված գործի: 1888 թվականին Նյու Յորքում հիմնադրելով արևելյան գորգերի, մետաքսյա գործվածքների և կիրառական արվեստի նմուշների ներմուծմամբ զբաղվող առևտրային ընկերություն՝ նա կարճ ժամանակում հաստատուն դիրք գրավեց ամերիկյան շուկայում [**10**]: Նրա գործունեությունը հիմնված էր ոչ միայն բարձրարժեք իրերի առևտրի, այլև Արևելքի գեղարվեստական ժառանգության նկատմամբ ամերիկյան հասարակության աճող հետաքրքրության արդյունավետ օգտագործման վրա: Այդ հանգամանքը հնարավորություն տվեց Թոփաքեանին ձևավորելու լայնածավալ առևտրային ցանց, որն ընդգրկում էր Օսմանյան կայսրությունը, Պարսկաստանը, Կովկասը, Հնդկաստանը, ինչպես նաև եվրոպական մի շարք առևտրային կենտրոններ:

XIX դարի վերջին ամերիկյան մամուլում Թոփաքեանի անունը հաճախ էր հիշատակվում որպես արևելյան գորգերի ամենահեղինակավոր ներմուծողներից մեկի [**29**, 1901 փետրվարի 27]: Մի շարք թերթեր նրան բնութագրում էին որպես արևելյան արվեստի բացառիկ գիտակ, որի հավաքածուները և կազմակերպած ցուցադրությունները նպաստում էին ամերիկյան հասարակության շրջանում արևելյան մշակույթի ճանաչմանն ու տարածմանը [**11**, էջ 1546]: Նրա առևտրական գործունեությունն աստիճանաբար ձեռք էր բերում նաև մշակութային նշանակություն՝ վերածվելով յուրատեսակ երկխոսության Արևելքի և Արևմուտքի միջև: Այս առումով Թոփաքեանի գործունեությունը կարելի է դիտարկել որպես մշակութային դիվանագիտության վառ օրինակ, երբ մասնավոր նախաձեռնությունը ծառայում էր ոչ միայն տնտեսական, այլև միջքաղաքակրթական հաղորդակցության խորացման նպատակներին:

Թոփաքեանի միջազգային հեղինակության ձևավորման կարևորագույն հանգրվանը 1893 թ. Չիկագոյում կազմակերպված Համաշխարհային կոլումբիական ցուցահանդեսն էր, որը նվիրված էր Քրիստափոր Կոլումբոսի՝ Ամերիկա ժամանման 400-ամյակին [**25**]: Ցուցահանդեսը XIX դարի ամենախոշոր միջազգային միջոցառումներից էր, որին մասնակցում էին աշխարհի տասնյակ պետություններ՝ ներկայացնելով իրենց տնտեսական, արդյունաբերական, մշակութային և գեղարվեստական նվաճումները: Պարսկաստանի մասնակցության կազմակերպման գործում առանցքային դեր ստանձնեց հենց Հայգազուն Թոփաքեանը, որը ոչ միայն ստանձնեց տաղավարի ձևավորման և ցուցադրության կազմակերպչական պատասխանատվությունը, այլև զգալի ֆինանսական միջոցներ ներդրեց դրա իրականացման համար: Ժամանակակից մամուլի վկայությամբ՝ նրա անձնական ծախսերը հասնում էին շուրջ 75.000 ԱՄՆ դոլարի, որը տվյալ ժամանակաշրջանի համար բացառիկ ներդրում էր [**5**, էջեր 115-116]: Նա անձամբ ֆինանսավորել էր պարսկական և օսմանյան տաղավարների կառուցումը, որտեղ ցուցադրված թանկարժեք գորգերն ու գործվածքները նրան բերել էին բազմաթիվ պարգևներ [**38**, 1893 հունիսի 6, էջ 1] և ԱՄՆ նախագահ Գրովեր Քլեվլենդի շնորհակալական նամակը [**20**]: Թոփաքեանի նախաձեռնությամբ կառուցված «Պարսկական պալատ» (Persian Palace) անվանումը կրող պարսկական ցուցասրահը ցուցահանդեսի առավել տպավորիչ ազգային տա-

ղավարներից էր [**40**]: Այն նախագծվել էր պարսկական ճարտարապետության ոճական առանձնահատկություններին համապատասխան և ներառում էր պարսկական գորգերի, մետաղարվեստի, զենքերի, խեցեղենի, մանրանկարչության, փայտարվեստի և կիրառական արվեստի այլ բացառիկ նմուշների հարուստ հավաքածու [**2**, էջ 147]: Ցուցասրահը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես մասնագետների, այնպես էլ լայն հասարակության շրջանում՝ նպաստելով ամերիկյան հանրության պատկերացումների ընդլայնմանը պարսկական մշակույթի և ընդհանրապես մերձավորարևելյան քաղաքակրթության վերաբերյալ: Միաժամանակ այն զգալիորեն բարձրացրեց Թոփաքեանի հեղինակությունը՝ նրան դարձնելով միջազգային մշակութային և առևտրական շրջանակներում լայնորեն ճանաչված գործիչ:

Ցուցահանդեսի հաջող կազմակերպման համար Պարսկաստանի կառավարությունը բարձր գնահատեց Թոփաքեանի ներդրումը՝ նրան պարգևատրելով «Առյուծի և Արեգակի շքանշանով» (Order of the Lion and Sun)[1] [**22**], որը երկրի բարձրագույն պետական պարգևներից էր: Թոփաքեանն արժանացավ նաև Օսմանյան կառավարության կողմից՝ «Մեջիդիե» (Nişan-ı Mecidi) [**8**, էջ 80], իսկ Վենեսուելայի կառավարության կողմից՝ «Բուստե դել Լիզուետոր» (Buste del Lisuetor)[2] շքանշանների: Այս պարգևատրումները վկայում էին, որ նրա գործունեությունն արդեն դուրս էր եկել մասնավոր առևտրի սահմաններից՝ ձեռք բերելով նաև պաշտոնական ճանաչում և դիվանագիտական նշանակություն: Հենց այս ժամանակաշրջանից սկսած Թոփաքեանն աստիճանաբար ներգրավվեց պետական ներկայացուցչական գործունեության մեջ՝ պահպանելով սերտ հարաբերություններ Պարսկաստանի պետական շրջանակների և Միացյալ Նահանգների քաղաքական ու հասարակական վերնախավի ներկայացուցիչների հետ:

ԱՄՆ-ում նրա հեղինակության աճին զուգահեռ ընդլայնվում էին նաև քաղաքական և հասարակական կապերը: XX դարի սկզբին նրա՝ Նյու Ջերսի նահանգում գտնվող «Persian Court» անունով հիշատակվող առանձնատունը դարձավ ժամանակի մտավորականների, դիվանագետների, պետական պաշտոնյաների և գործարարների հանդիպումների հայտնի վայրերից մեկը [**35**, 1910 հուլիսի 7, էջ 2]: Այն աչքի էր ընկնում պարսկական ճարտարապետական ձևավորումով ու արևելյան արվեստի բացառիկ հավաքածուներով [**37**, 1907 հուլիսի 12, էջ 1]: Այս հանդիպումները հնարավորություն էին տալիս Թոփաքեանին ընդլայնելու իր կապերը և ամրապնդելու հեղինակությունն այն շրջանակներում, որոնք հետագայում կարևոր դերակատարություն պիտի ունենային միջազգային ու մարդասիրական նախաձեռնությունների իրականացման գործում: Այդ այցելուներից նա հավաքել էր ավելի քան 175 ինքնագիր դիմանկար և հուշագիր [**37**, 1907 հուլիսի 12, էջ 1]:

1907 թվականին, նախագահի քարտուղար Ուիլյամ Լոբի աջակցությամբ, Թոփաքեանը հանդիպեց նախագահ Թեոդոր Ռուզվելտի հետ [**15**]: Նախագահը ցանկություն էր հայտնել տեսնել Թավրիզից բերված բացառիկ պարսկական աղոթագորգը, որի արժեքն այն ժամանակ գնահատվում էր 50.000 դոլար [**19**, էջ 99]: Գորգը պատրաստված էր կայսերական որակի մետաքսից և զարդարված էր 16.000 մարգարիտով, 26 փիրուզով և 5 ամեթիստով [**31**, 1909 մարտի 3, էջ 2]: Երբ Թոփաքեանն առաջարկեց ընդունել այն որպես անձնական նվեր, Ռուզվելտը պատաս-

[1] Լուսանկարից դատելով՝ Թոփաքյանը երկու անգամ է պարգևատրվել պարսկական «Առյուծ և Արև» (պարս. نشان شیر و خورشید *Nešān-e Šir o Xoršid*) շքանշանով. առաջին անգամ՝ II աստիճանի աստղով, և երկրորդ անգամ՝ I աստիճանի (*Խմբագրի կողմից* – **Գ. Պ.**):

[2] «Buste del Lisuetor» արտահայտությունը տպագրական սխալ է, որն առաջացել է տեքստի օպտիկական ճանաչման (OCR) կամ 20-րդ դարի սկզբի կենսագրական տպագիր հրատարակություններում տեղ գտած հին վրիպակների հետևանքով (օրինակ՝ 1914 թվականի «History of Morris County, New Jersey», Volume II, Lewis Publishing Co.): Իրականում այս բառակապակցության տակ թաքնված է «Ազատարարի կիսանդրին» (իսպ. «Busto del Libertador»)՝ Վենեսուելայի պաշտոնական շքանշանը (իսպ. Orden del Libertador) (*Խմբագրի կողմից* – **Գ. Պ.**):

խանեց, որ կարող է այն ընդունել միայն այն դեպքում, եթե այն պահպանվի Սպիտակ տանը [**16**]: Այդպիսով, գորգը դարձավ օտար երկրի քաղաքացու կողմից Միացյալ Նահանգներին մատուցված ամենաթանկարժեք նվերներից մեկը [**28**, 1909 փետրվարի 20, էջ 1]: 1908 թ. փետրվարի 18-ին այն պաշտոնապես հանձնվեց Սպիտակ տանը և տեղադրվեց գործադիր գրասենյակներից մեկում՝ հատուկ պատրաստված կարմրափայտ շրջանակի մեջ:

Իսկ 1910 թ. հունվարին Թոփաքեանը երկրին նվիրեց մեկ այլ հազվագյուտ պարսկական գորգ՝ նախագահ Ուիլյամ Հովարդ Թաֆթի միջոցով [**42**]: Երկրորդ գորգի չափսը 6½ x 4½ ոտնաչափ էր, ծաղկային նախշով՝ դեղնականաչ ֆոնի վրա և դեղնականաչ ու բաց կարմիր եզրագծով՝ առաջինի նման, սակայն առանց թանկարժեք քարերի [**9**, էջ 272]: Այն ևս համարվում է ամերիկյան ազգային հարստություններից մեկը:

Հետագայում, Թոփաքեանը Սպիտակ տանը մի կտավ նվիրեց, որն ընդունվեց 1913 թվականի հունիսի 13-ին նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից [**7**]: Կտավի հեղինակը պոլսահայ ծովանկարիչ Կարլ Գալուստն էր: «Ողջունում» անունը կրող կտավում մայրամուտին Ազատության արձանը՝ մարգարտագույն մշուշով պատված, ձեռքը պարզած ողջունում էր մայրացամաք եկողներին: Այն այսօր ևս պահպանվում է ամերիկյան ազգային հարստությունների շարքում: Պետք է նշել, որ նույն թվականին Հայգազուն Թոփաքեանի աջակցությամբ ԱՄՆ-ում՝ Արևմտյան 69-րդ փողոց 46 հասցեում բացվեց Կարլ Գալուստի կտավների ժամանակավոր ցուցադրությունը [**37**, 1913 նոյեմբերի 29, էջ 3]:

Նույն ժամանակաշրջանում շարունակվում էր նաև Թոփաքեանի հասարակական և բարեգործական գործունեությունը հայկական համայնքի շրջանակներում: Նա մասնակցում էր ամերիկահայ համայնքի հասարակական կյանքին, աջակցում կրթական ու բարեգործական նախաձեռնություններին, հետաքրքրվում Օսմանյան կայսրության հայ բնակչության խնդիրներով և հետևում արևմտահայության քաղաքական կացության զարգացումներին: Հենց այս հանգամանքն է նրա գործունեությանը հաղորդում առանձնահատուկ նշանակություն. տնտեսական հաջողությունն ու միջազգային հեղինակությունը նրա համար երբեք ինքնանպատակ չէին, այլ աստիճանաբար վերածվում էին ազգային խնդիրների լուծման գործիքների: Պետք է նշել, որ թեև Թոփաքեանը դարձել էր Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, երբեք ակտիվորեն չէր մասնակցել ամերիկյան կուսակցական կյանքին՝ նախընտրելով կենտրոնանալ ազգային, հասարակական, մշակութային և դիվանագիտական գործունեության վրա:

1908 թվականի Երիտթուրքական հեղաշրջումը, որը սկզբնական շրջանում մեծ ոգևորությամբ ընդունվեց ինչպես Օսմանյան կայսրության հայ բնակչության, այնպես էլ աշխարհի տարբեր կողմերում ապրող հայության կողմից, նոր ակնկալիքներ էր ստեղծել սահմանադրական կարգերի վերականգնման և ազգային իրավահավասարության հաստատման վերաբերյալ: Սակայն արդեն հաջորդ տարի տեղի ունեցած Ադանայի կոտորածները ցույց տվեցին, որ սահմանադրական վերափոխումները չեն վերացրել կայսրության ներսում առկա ազգային ու կրոնական հակասությունները: Այդ իրադարձությունները լրջագույն ցնցում էին ողջ հայության համար և պահանջում էին արագ ու համակարգված արձագանք:

Հենց այս հանգրվանում առավել ակնհայտ դարձավ նախորդ երկու տասնամյակների ընթացքում ձևավորված այն ներուժը, որը կուտակել էր Հայգազուն Թոփաքեանը: Նրա տնտեսական կարողությունները, միջազգային կապերը, ամերիկյան քաղաքական և հասարակական շրջանակներում ունեցած դիրքն ու հեղինակությունը, բարեգործական գործունեության փորձը և կազմակերպչական ունակությունները ստեղծել էին այն անհրաժեշտ նախադրյալները, որոնք 1909 թվականին նրան հնարավորություն տվեցին ներգրավվելու Ադանայի կոտորածներից մազապուրծ հայերի օգնության կազմակերպման գործում: Նրա ազգային գործունեության առաջին խոշոր դրսևորումներից մեկը դարձավ Ադանայի կոտորածներից հետո քսանութ հայ որբերի խնամքի ամբողջ ծախսերի ստանձնումը, ինչը հետագայում վերաճեց շատ ավելի լայնածավալ մարդասիրական նախաձեռնությունների [**29**, 1909 նոյեմբերի 7, էջ 2]: Աղբյուրներում նշվում է նաև, որ 1909 թվականից հետո Հայգազուն Թոփաքեանն Ամերիկյան Կարմիր խաչի անունից օգնության հավաքագրման նախաձեռնություններում էր ներգրավված և այդ գործունեությունը մեծապես անհանգստացնում էր Օսմանյան իշխանություններին [**21**, էջ 103]: Այս դրվագներին և Թոփաքեանի՝ Ադանայի ջարդերի միջազգային դատապարտման անհրաժեշտության մասին 1909 թվականի նոյեմբերին Հոբոկենի «Լիբերթի» դահլիճում հնչեցված պատմական ելույթին [**33**, 1909 նոյեմբերի 25, էջ 2] առավել մանրամասն և հանգամանորեն նախատեսում ենք անդրադառնալ առանձին գիտական հոդվածով:

1909 թվականի մարտին Թոփաքեանը նշանակվեց Պարսկաստանի գլխավոր հյուպատոս Նյու Յորքում [**37**, 1909 օգոստոսի 3, էջ 1]՝ դառնալով այդ պաշտոնում նշանակված առաջին պաշտոնյան, որը պաշտոնապես կոչվում էր ոչ թե հյուպատոս, այլ գլխավոր հյուպատոս [**43**, 1909 նոյեմբերի 27, էջ 1]: Հայի նշանակումն այդ

պաշտոնում, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր ոչ միայն Թոփաքեանի՝ շարունակաբար աճող հեղինակությամբ, այլև ամերիկացի միսիոներների ազդեցությամբ, քանի որ այդ ժամանակ Պարսկաստանը քաղաքական ցնցումների մեջ էր և կար հնարավորություն օգտվելու քաղաքական այդ անկայուն իրավիճակից: Թոփաքեանի ծառայությունը համընկավ Կաջարների արքայատոհմի (1795-1925) իշխանության շրջանի հետ [**24**], երբ Պարսկաստանը գտնվում էր Մեծ տերությունների, հատկապես Բրիտանիայի և Ռուսաստանի ազդեցության տակ: Պարսկական կառավարության անկարողությունն ու կոռուպցիան երկրում հանգեցրին բահայականություն կոչվող կրոնական նոր շարժման առաջացմանը, որով Թոփաքեանը հետաքրքրված էր, ինչպես նաև՝ սոցիալական անկարգությունների: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում բրիտանական ու ռուսական զորքերը թուրքական զորքերի դեմ էին կռվում պարսկական տարածքում, ու պատերազմից հետո պարսկական կառավարության իշխանությունը լիովին քայքայվեց: Մի քանի միապետների հաջորդական կառավարումից հետո վարչապետ Ռեզա Խանը դարձավ միակ իշխանապետը և 1923 թվականից երկիրը փաստացիորեն սկսեց ղեկավարվել Փահլավիների արքայատոհմի կողմից:

Այս պայմաններում Թոփաքեանը, որպես Պարսկաստանի պաշտոնական ներկայացուցիչ, շարունակում էր պաշտպանել երկրի շահերն ու հեղինակությունը Միացյալ Նահանգներում՝ միաժամանակ ուշադիր հետևելով աշխարհաքաղաքական զարգացումներին և դրանց հնարավոր ազդեցությանը թե՛ Պարսկաստանի, թե՛ հայ ժողովրդի ճակատագրի վրա: Դրա վառ վկայություններից է 1909 թվականի հոկտեմբերի 1-ին Օլբանիի Բյուրգեսես կորպուսին ուղղված նրա հայտարարությունը, որտեղ նա պնդում էր, որ Անգլիայի ու Գերմանիայի միջև պատերազմն անխուսափելի է, և որքան շուտ, այնքան լավ Անգլիայի համար, քանի որ ուշացումը միայն Գերմանիային ուժեղացնելու հնարավորություն կտար: Միաժամանակ, նա խաղաղասիրական ու խաղաղության հաստատման հորդորներով էր դիմել թուրք դեսպան Զիյա Փաշային հանուն ժողովուրդների խաղաղ գոյության ու ապագայի [**37**, 1922 ապրիլի 22, էջ 2]:

Պետք է նշել, որ 1909 թվականից Թոփաքեանը դարձել էր Օլբանիի Բյուրգեսես կորպուսի (Albany Burgesses Corps) ցմահ անդամ, ինչպես նաև արժանացել էր պատվավոր գնդապետի կոչման և նշանակվել կորպուսի շտաբի տեսուչ [**41**, 1909 հունիսի 9, էջ 4]: Նման պատվի արժանացած այլ նշանավոր անձանց թվում էին գեներալ Նելսոն Ա. Մայլսը, Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ VII-ը, Մեքսիկայի նախագահ Պորֆիրիո Դիասը, սըր Թոմաս Լիփթոնը, Ջ. Փիերպոնթ Մորգանը, ԱՄՆ նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտը, Օգյուստ Բելմոնտը, Ջոն Դ. Ռոքֆելլերը և Էնդրյու Քարնեգին:

Հայգազուն Թոփաքեանի հասարակական ու խաղաղասիրական գործունեության կարևոր դրսևորումներից էր նաև նրա ներգրավվածությունը միջազգային խաղաղության շարժման մեջ: Թոփաքեանը զբաղեցրել է Միջազգային խաղաղության ֆորումի (International Peace Forum) պատվավոր փոխնախագահի պաշտոնը [**18**, էջեր 8-9], որի նախագահն էր ամերիկացի հոգևորական և խաղաղության շարժման ակտիվ գործիչ Ջոն Ուեսլի Հիլը, իսկ պատվավոր նախագահը՝ ԱՄՆ նախկին նախագահ Ուիլյամ Հ. Թաֆթը: Թոփաքեանի ներգրավվածությունը խաղաղության նախաձեռնություններում դրսևորվում էր ոչ միայն պաշտոնական կարգավիճակով, այլև գործնական մասնակցությամբ: Նա մասնակցել է Լեյք Մոհոնկի խաղաղության համաժողովին և հանդես եկել միջազգային խաղաղության, ժողովուրդների փոխադարձ աջակցության, ու հատկապես առավել խոցելի և անբարենպաստ վիճակում գտնվող ժողովուրդների պաշտպանության անհրաժեշտության մասին գաղափարներով [**3**, էջեր 122-123]:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, այդ տարիներին և դրանից հետո Թոփաքեանի քաղաքական դիրքորոշումները դարձան առավել հստակ: Նա քննադատաբար էր վերաբերվում Մեծ տերությունների քաղաքականությանը, իսկ հետագայում՝ նաև այն ամերիկացի պաշտոնյաներին, որոնք, իր կարծիքով, անտեսում էին հայ ժողովրդի ողբերգությունն ու աջակցում թուրքական իշխանություններին [55, էջ 1]: Այդ համատեքստում առանձնապես հայտնի է դարձել նրա քննադատությունը Մերձավոր Արևելքում ԱՄՆ ռազմածովային ներկայացուցիչ ծովակալ Մարկ Լ. Բրիստոլի հասցեին, որի թուրքամետ դիրքորոշումը լայն դժգոհություն էր առաջացրել հայ քաղաքական և հասարակական շրջանակներում [**14**, էջ 177]: Այս դիրքորոշումը ցույց է տալիս, որ Թոփաքեանի համար ազգային հարցը երբեք չէր առանձնացվում նրա դիվանագիտական գործունեությունից. ընդհակառակը, նա ձգտում էր իր հեղինակությունն ու միջազգային կապերը ծառայեցնել նաև հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը:

1914 թվականին Թոփաքեանը նշանակվեց Պարսկաստանի գլխավոր հանձնակատար Սան Ֆրանցիսկոյի խաղաղօվկիանոսյան միջազգային ցուցահանդեսում: Պարսկական տաղավարի հողամասը նվիրվել էր 1913 թվականի նոյեմբերին, և դրա կալվածագիրը հանձնվեց

Թոփաքեանին: Նա կազմակերպեց 300,000 դոլար արժողությամբ ցուցադրություններ՝ ամերիկյան և պարսկական ընկերությունների կողմից պայմանագրով տրամադրված [**1**]: Երբ մեկ այլ պարսիկ պաշտոնյա հայտարարեց, թե ինքն է այդ պաշտոնում նշանակված, Պետդեպարտամենտն օգնեց Թոփաքեանին ստանալ իր նշանակման վերահաստատումը նոր պարսից վարչապետ, գեներալ Մեհդի խանից: Թոփաքեանը իր պաշտոնավարման ամբողջ ընթացքում պարսկական քաղաքական ու առևտրական ներկայացուցիչների և ամերիկացի պաշտոնյաների կապող օղակն էր: 1914 թվականի փետրվարին պարսից նախկին շահ Մոհամմեդ Ալի Միրզայի՝ Ամերիկայի Միացյալ Նահագներ այցի ընթացքում Թոփաքեանն առաջին շարքում էր՝ այցի կազմակերպման, ամերիկացի գործընկերների հետ հարաբերությունների հաստատման ու նրանց միջև փոխշահավետ համագործակցության խորացման աշխատանքներում [**37**, 1914 փետրվարի 4, էջ 1]: Իսկ 1915 թվականի հունիսին Թոփաքեանը կրկին մեկնեց Պարսկաստան՝ մասնակցելու Ահմադ շահի թագադրության պաշտոնական արարողությանը [**39**]:

Ինչպես Ադանայի ջարդերի, այնպես էլ Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրագործված հայ բնակչության կոտորածների ու Հայոց ցեղասպանության (որոնց զոհ էին գնացել նաև Կեսարիայում բնակվող Թոփաքեան գերդաստանի ներկայացուցիչները, այդ թվում՝ հայտնի ձեռնարկատեր Խաչեր Թոփաքեանը՝ Հայգազուն Թոփաքեանի հորեղբայրը, որը սպանվել էր թուրքերի կողմից՝ իր երկու որդիների հետ միասին [**26**, 1915 հոկտեմբերի 28, էջ 1]) ընթացքում Թոփաքեանն արևմտահայ գաղթականների, Հայոց ցեղասպանությունից մազապուրծների, որբերի պաշտպանն ու հայոց արդար պահանջատիրության առաջամարտիկներից մեկն էր [**43**, 1922 հուլիսի 16, էջ 2]: Դեռևս 1915 թվականի հոկտեմբերին Թոփաքեանն ընդարձակ նամակ-խնդրագրով դիմել էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ ներկայացնելով արևմտահայության սարսափելի կացությունը և ԱՄՆ հանձնառությունը՝ կանխարգելելու հայությանն առերեսվող հարստահարությունները [**17**, էջեր 104-105], որին ի պատասխան նույն թվականի հոկտեմբերի 27-ին նախագահ Վիլսոնը գրել էր՝ շեշտելով, որ «*կշարունակի դիվանագիտական ուղիներով ձեռնարկել հնարավոր բոլոր քայլերը*» [**17**, էջ 119]: Հայոց ցեղասպանության տարիներին Հայգազուն Թոփաքեանի համակողմանի գործունեության մասին ևս նախատեսում ենք հրատարակել առանձին անդրադարձ:

Թոփաքեանի հասարակական և քաղաքական ազդեցության մասին է վկայում նաև նրա 51-րդ տարեդարձի առթիվ The Wilmington Dispatch շաբաթաթերթում 1915 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակված նյութը: «Հիշարժան ծննդյան օրեր» խորագիրը կրող հոդվածում Թոփաքեանը ներկայացվում է որպես «Ամերիկայում ամենաազդեցիկ և առաջադեմ գործիչներից մեկը» [**44**, 1915 նոյեմբերի 5, էջ 1]: Հրապարակումը շեշտադրում է նրա գործունեությունը Չիկագոյի ցուցահանդեսում, մասնավորապես՝ պարսկական և օսմանյան տաղավարների կառուցումն իր միջոցներով, ինչպես նաև Սպիտակ տանը հետագայում տեղադրված՝ թանկարժեք քարերով զարդարված պարսկական գորգի նվիրաբերումը:

Թեև Թոփաքեանը հաճախ էր հայտնվում մամուլի ուշադրության կենտրոնում, նրա գործունեության մի հետաքրքիր դրվագ համեմատաբար քիչ արձագանք է ստացել: 1918 թվականի ապրիլին Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանում ցուցադրվեց այն բացառիկ պարսկական գորգը, որը տարիներ առաջ Թոփաքեանի կողմից նվիրաբերվել էր նախագահ Թեոդոր Ռուզվելտին: Ցուցադրությունից ստացված ողջ հասույթը բաժանվեց Հայկական ու Սիրիական օգնության հիմնադրամներին և Ամերիկյան Կարմիր խաչին [**23**, էջ 24]: Այս նախաձեռնությունը հերթական վկայությունն է այն բանի, որ պատերազմի ամենածանր տարիներին Թոփաքեանը գործի էր դնում հնարավոր բոլոր միջոցները՝ մասնակցելու մարդասիրական ծրագրերի, իրականացնելու նոր ծրագրեր և ամրապնդելու իր ազդեցիկ դերակատարությունը հայության օգնության կազմակերպման գործում: Հատկանշական է, որ տարիներ առաջ մշակութային դիվանագիտության նպատակով կատարված նվիրատվությունը հետագայում ծառայեցվեց պատերազմից տուժած ժողովուրդների օգնության ու օժանդակության գործին:

Պատերազմից հետո Թոփաքեանի հասարակական և դիվանագիտական գործունեությունը շարունակեց ընդլայնվել: Աբիսինիայի (Եթովպիայի) առաքելության պաշտպանությունը դարձավ նրա գործունեության կարևոր ուղղություններից մեկը [**46**, էջ 153]: 1919 թվականի օգոստոսի 4-ին նա կազմակերպեց հրաժեշտի հանդիսավոր ճաշ, որը լայնորեն լուսաբանվեց ամերիկյան մամուլում: Սկզբում միջոցառումը նախատեսված էր իրականացնել Ազգային դեմոկրատական ակումբում, սակայն երբ ակումբի անդամներից մեկը դժգոհեց, որ պատվավոր հյուրերը սևամորթ են, կազմակերպիչները հրաժարվեցին ընդունել նրանց: Թոփաքեանը, համարելով նման վերաբերմունքն անընդունելի, անմիջապես ձեռնարկեց անհրաժեշտ քայլեր և, խորհրդակցելով Պետքարտուղարության ներկայացուցիչների հետ, կազմակերպեց նոր ընդունելություն Նյու Յորքի հան-

րահայտ Ritz-Carlton ռեստորանում: Ընդունելության պատվավոր հյուրերն էին Աբիսինիայի գահաժառանգ արքայազն Դեջաջմաչ Մադաոն, վարչապետ Կանտիբա Գեյրոնը և պետական գործիչ Ատո Հերոնին [**37**, 1919 օգոստոսի 4, էջ 5]: Թոփաքեանի նախաձեռնությունը ոչ միայն դիվանագիտական նրբանկատության դրսևորում էր, այլև սկզբունքային դիրքորոշում՝ ուղղված ռասայական խտրականության դեմ: Այս միջադեպը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նրա մարդասիրական հայացքները սահմանափակված չէին ազգային շրջանակներով, այլ ընդգրկում էին ժողովուրդների միջև հավասարության ու փոխադարձ հարգանքի գաղափարները:

Նույն թվականի հոկտեմբերին Թոփաքեանը ձեռնարկեց իր վերջին խոշոր պաշտոնական շրջագայություններից մեկը: White Star Line ընկերության «Lapland» նավով նա մեկնեց Եվրոպա և Մերձավոր Արևելք՝ շուրջ չորսամսյա ճանապարհորդության: Շրջագայության ավարտը նախատեսված էր Թեհրանում, որտեղից նա պետք է ուղեկցեր պարսկական շահին դեպի Նյու Յորք [**37**, 1919 հոկտեմբերի 13, էջ 7]: Միաժամանակ, շրջագայության ընթացքում նախատեսվում էին Թոփաքեանի հանդիպումներն Աբիսինիայի գահաժառանգի [**37**, 1919 ապրիլի 12, էջ 3], ինչպես նաև բահայական շարժման առաջնորդ Աբդուլ-Բահա Աբբասի հետ [**13**]: Թոփաքեանն առաջին անգամ հանդիպել էր Աբդուլ-Բահային 1912 թվականի մայիսի 13-ին՝ Նյու Յորքի Խաղաղության ընկերության կազմակերպած հանդիպման ժամանակ, որտեղ Աբդուլ-Բահան ելույթ էր ունեցել ռաբբի Սթիվեն Ուայզի և Փերսի Սթիքնի Գրանթի հետ միասին, իսկ նույն թվականի հունիսին Բահան հյուրընկալվել էր Թոփաքեանի նյույորքյան առանձնատանը [**6**]: Աբդուլ-Բահան հետագայում ևս մի քանի անգամ հանդիպել էր Թոփաքեանին և Ամերիկայից վերջինիս հեռանալուց հետո էլ տարիներ շարունակ պահպանել կապը նրա հետ: Թոփաքեանին ուղղված Բահայի նամակներից մեկում, մասնավորապես, գրված է. «*Ես կաղոթեմ Ձեզ և տիկնոջ համար, որպեսզի Աստծո Արքայության Դռները միշտ բաց լինեն Ձեր առջև, ու Աստվածային անսահման շնորհները շարունակաբար հեղվեն Ձեր վրա, որպեսզի, Քրիստոսի խոսքերի համաձայն, Դուք լինեք ընտրյալների և ոչ թե պարզապես կանչվածների թվում*» [**45**]: Այս ամենը վկայությունն է այն բանի, որ Թոփաքեանի հետաքրքրություններն ու կապերը վաղուց արդեն դուրս էին եկել միայն առևտրական և հյուպատոսական գործունեության սահմաններից՝ ընդգրկելով միջազգային քաղաքական, կրոնական և մշակութային շրջանակներ՝ բարձրացնելով նրա վարկն ու հեղինակությունը: Այս համատեքստում հետաքրքրական է նաև Թոփաքեանի հաջորդ ճանապարհորդությունը դեպի Եվրոպա White Star Line ընկերության անդրատլանտյան Olympic նավով՝ Եգիպտոսի արքայազն Մոհամեդ Ալի Իբրահիմի ու Blink մականունով բռնցքամարտիկ Էլվուդ ՄաքՔլոսկի հետ միասին [**36**, 1922 ապրիլի 22, էջ 2]:

1920-ական թվականների սկզբին Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններն աստիճանաբար փոխեցին նաև Թոփաքեանի պաշտոնական գործունեության բնույթը: Երկարատև ներքաղաքական ճգնաժամերից հետո Ռեզա խանը դարձավ երկրի փաստացի ղեկավարն ու սկսեց այն քաղաքական գործընթացները, որոնք հետագայում հանգեցրին Փահլավիների արքայատոհմի հաստատմանը [**12**]: Այս փոփոխությունների պայմաններում Թոփաքեանը 1923 թվականին հրաժարական տվեց գլխավոր հյուպատոսի պաշտոնից՝ ավարտելով ավելի քան մեկ տասնամյակ տևած իր դիվանագիտական ծառայությունը [**34**, 1926 հոկտեմբերի 17, էջեր 4-5]: Սակայն պաշտոնական լիազորությունների ավարտը չնշանակեց հասարակական գործունեությունից հեռացում. Թոփաքեանը շարունակեց ակտիվորեն մասնակցել բարեգործական, մշակութային և գիտական նախաձեռնություններին:

1924 թվականի մարտի 6-ին Թոփաքեանը Չիկագոյի Ֆիլդ թանգարանին նվիրեց մի բացառիկ փիրուզ, որը ժամանակակիցները բնութագրում էին որպես «աշխարհի ամենամեծ և կատարյալ փիրուզը» [**30**, 1924 մարտի 19, էջ 1]: Մոտ 400 կարատ կշռող այս թանկարժեք քարը սերնդեսերունդ պահպանվել էր Թոփաքեանների ընտանիքում ու համարվում էր ընտանեկան արժեքավոր մասունք [**32**, 1926 հոկտեմբերի 23, էջ 5]: Այն թանգարանին նվիրաբերելու որոշումը իրական բնութագրիչն էր Թոփաքեանի աշխարհընկալման. մշակութային և պատմական արժեքները պետք է ծառայեին հանրային շահին ու գիտական ուսումնասիրությանը:

Թոփաքեանի կյանքի վերջին տարիները ևս, չնայած առաջացած տարիքին և առողջական որոշ խնդիրներին, շարունակում էին ընթանալ հասարակական շփումներով, հանդիպումներով ու նոր նախաձեռնությունների իրականացմամբ: Սակայն 1926 թվականի հոկտեմբերի 13-ին Նյու Յորքում տեղի ունեցավ մի դեպք, որը ցնցեց նրա ընտանիքին, ընկերներին և բազմաթիվ գործընկերներին: Հայգազուն Թոփաքեանը վար ընկավ Ցեյլ ակումբի շենքի տասնյոթերորդ հարկից և տեղում մահացավ [**37**, 1926 հոկտեմբերի 24, էջ 1]: Ոստիկանությունը, չգտնելով ինքնասպանության համոզիչ ապացույցներ, մահը որակեց որպես դժբախտ պատահար: Ականատեսների վկայությամբ, դեպքից առաջ պատուհանից երկու ճամպրուկ էր ընկել: Ոստիկանության նախնական վարկածի համաձայն՝ Թոփաքեանը, հավանաբար, կորցրել էր հավա-

սարակշռությունը և պատուհանից վայր ընկել: Դժբախտ պատահարից հետո նրա բացված ճամպրուկում գտնվել էին նամակներ մի առևտրային ընկերությունից, ինչպես նաև Թեոդոր Ռուզվելտից ու Վուդրո Վիլսոնից [**27**, 1926 հոկտեմբերի 24, էջ 2]: Այնուամենայնիվ, դեպքի որոշ մանրամասներ հետագայում տարբեր ենթադրությունների տեղիք տվեցին. չէ որ առաջ քաշված «պատահական վար ընկնելու» վարկածը չափազանց պարզունակ է թվում՝ հաշվի առնելով նրա հասարակական, քաղաքական, առևտրատնտեսական ու մշակութային կշիռը, և այն հեղինակությունը, որը նա վայելում էր իր կենդանության օրոք:

Թոփաքեանի վերջին հրաժեշտի արարողությունը տեղի ունեցավ 1926 թվականի հոկտեմբերի 17-ին Նյու Յորքի Park Avenue Baptist Church եկեղեցում: Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագետներ, հասարակական, մշակութային գործիչներ և գործարարներ: Հիշատակի խոսքեր հնչեցին պարսկական դեսպանության, Հանրապետական և Դեմոկրատական ակումբների, Նյու Յորքի հասարակական կազմակերպությունների և գործավաճառների միությունների ներկայացուցիչների կողմից: Այս հանգամանքը վկայում էր այն լայն հարգանքի մասին, որը նա վայելում էր ԱՄՆ հասարակական կյանքի տարբեր շրջանակներում՝ անկախ ազգային, քաղաքական կամ կրոնական պատկանելությունից: Պարսկական պաշտոնական համազգեստով հագցված Հայգազուն Թոփաքեանը հողին հանձնվեց Նյու Յորքի Woodlawn Cemetery գերեզմանատանը՝ Տեր Մատթեոս Հեքիմյանի կողմից կատարված թաղման կարգից հետո [**34**, 1926 հոկտեմբերի 17, էջեր 4-5]:

Այսպիսով, ավարտվեց մի մարդու կյանք, որը կարողացավ համադրել արևմտահայ վաճառականի գործարար ոգին, միջազգային ճանաչում վայելող դիվանագետի հեղինակությունը և հեռատեսությունը, բարեգործի նվիրումն ու ազգային գործչի պատասխանատվության բարձր զգացումը: Նրա կենսագրությունը ոչ միայն անհատական հաջողության պատմություն է, այլև ուշագրավ վկայություն այն մասին, թե ինչպես կարող էին Սփյուռքում ձևավորված տնտեսական կարողությունները, միջազգային կապերն ու հասարակական հեղինակությունը ծառայեցվել համազգային, մարդասիրական և միջմշակութային նպատակների, նախաձեռնությունների իրականացմանը: Այդ առումով Հայգազուն Թոփաքեանը XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի այն հասարակական-քաղաքական կյանքի առավել նշանակալի գործիչներից մեկն է, որի գործունեությունը կարևոր տեղ է զբաղեցնում հայ Սփյուռքի, միջազգային դիվանագիտության և հայ բարեգործության պատմության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. A Sense of Wonder: The 1915 San Francisco World's Fair // https://www.moah.org/archivedexhibits/060702-092202-a-sense-of-wonder-the-1915-san-francisco-worlds-fair (Accessed: 02.05.2026).
2. **Aghaie, K. & Afshin, M.** Rethinking Iranian Nationalism and Modernity. – Austin, University of Texas Press, 2014. Pp. 388.
3. **Ahdieh, H. & Chapman H.** ‘Abdu’l-Bahá in New York: Centenary of His Visit to America. – Hong Kong, Juxta Publishing, 2012. Pp. 148.
4. Armenian Immigration project, Abstracts of Primary Source Material for the Study of Armenian Immigration to North America through 1930 // https://markarslan.org/ArmenianImmigrants/Public-ViewDetail-ArmenianImmigrants-Main/ (Accessed: 13.05.2026).
5. **Axe, J. & Wetherhold, F.** World’s Columbian Exposition Revisited, Chicago 1893-1993. – Chicago, United Federation of Doll Clubs, Inc., 1993. Pp. 103.
6. Barbecue In Honor of Abdul-Baha // https://bahai.works/Star_of_the_West/Volume_3/Issue_11/Text#pg8 (Accessed: 15.06.2026).
7. **Calusd, C.** Welcome // https://www.artsy.net/artist/carl-calusd.
8. **Fidan, D.** Osmanli Belgelerinde 1893 Şikago Sergisi, Yüksek Lisans Tezi. – Istanbul, 2022.
9. Guide to the Field Columbian Museum - period museum guide, Chicago, 1894 // https://archive.org/details/guidetofieldcolu00fiel_1 (Accessed: 15.06.2026).
10. Haigazoun Hohannes Topakyan // https://www.usgenwebsites.org/NJMorris/biographies/lewisbios/topakyanh.htm (Accessed: 02.06.2026).
11. **Hamersly, L.** Men and Women of America: A Biographical Dictionary of Contemporaries. – New York, 1909. Pp. 1592.
12. History of Iran: Pahlavy Dynasty, 2018 // https://www.iranchamber.com/history/pahlavi/pahlavi.php (Accessed: 02.06.2026).
13. **Jones, C.** Speaking Persian in America: The Persian Consul of New York invites ‘Abdu’l-Bahá to a barbecue, 29.06.2012 // https://239days.com/2012/06/29/speaking-persian-in-america/ (Accessed: 11.06.2026).
14. **Laderman, C.** Sharing the Burden: The Armenian Question, Humanitarian Intervention, and Anglo-American Visions of Global Order. – New York, Oxford University Press, 2019. Pp. 301.
15. Letter from Hayozoun Hohannes Topakyan to William Loeb, 12.10.1908 // https://www.theodoreroosevelt center.org/digital-library/o59277/ (Accessed: 19.06.2026).
16. Letter from Theodore Roosevelt to Hayozoun Hohannes Topakyan, 17.02.1909 // https://www.theodoreroosevelt center.org/digital-library/o206649/ (Accessed: 19.06.2026).

17. **Link, A.** The Papers of Woodrow Wilson, Volume 35, October 1, 1915-January 27, 1916, Princeton. – New Jersey, Princeton University Press, 1980. Pp. 600.
18. **Macias, S.** Mahmúd's Diary: The Diary of Mírzá Mahmúd-i-Zarqání Chronicling 'Abdu'l-Bahá's Journey to America. – Oxford, George Ronald, 1998. Pp. 526.
19. **Mackie, L.** Jeweled Islamic Textiles - Imperial Symbols. // "Textile Society of America Symposium Proceedings". – Lincoln, University of Nebraska, 2002 // https://digitalcommons.unl.edu/tsaconf/399/ (Accessed: 21.06.2026).
20. Nothing to be ashamed of on the Midway Plaisance, 22.02.2025 // https://worldsfairchicago1893.com/2025/02/22/nothing-to-be-ashamed-of-on-the-midway-plaisance/ (Accessed: 21.06.2026).
21. **Öztürk, S.** Sosyal ve Beşerî Bilimlerde Teori ve Araştırmalar II. – Ankara, Gece Kitaplığı, 2020. Pp. 682 // https://www.gecekitapligi.com/Webkontrol/uploads/Fck/sosyal1_2.pdf (Accessed: 26.06.2026).
22. Persia Order of the Lion and Sun // https://gmic.co.uk/topic/48274-persia-order-of-the-lion-and-sun/ (Accessed: 26.06.2026).
23. **Shannon, M.** American-Iranian Dialogues from Constitution to White Revolution, c. 1890s-1960s. – London, Bloomsbury Publishing Plc., 2022. Pp. 252.
24. **Szczepanski, K.** The Qajar Dynasty, 21.07.2019 // https://www.thoughtco.com/what-was-the-qajar-dynasty-195003 (Accessed: 30.06.2026).
25. The 1893 World's Fair, Columbian Exposition, 09.08.2026 // https://worldsfairchicago1893.com/ (Accessed: 30.06.2026).
26. The Christian Science Monitor – newspaper (Boston, MA).
27. The Cornell Daily Sun – newspaper (Ithaca, NY).
28. The Evening Mascot – newspaper (Statesville, NC).
29. The Evening Star – newspaper (Washington, D.C.).
30. The Grants Pass Daily Courier – newspaper (Grants Pass, OR).
31. The Griffin Daily News and Sun – newspaper (Griffin, GA).
32. The Kerrville Mountain Sun – newspaper (Kerrville, TX).
33. The Los Angeles Times – newspaper (Los Angeles, CA).
34. The Manchester Evening Herald – newspaper (Manchester, CT).
35. The New York Call – newspaper (New York City, NY).
36. The New York Herald – newspaper (New York City, NY).
37. The New York Times – newspaper (New York City, NY).
38. The New-York Daily Tribune – newspaper (New York City, NY).
39. The Panama-Pacific International Exhibition // https://www.nps.gov/goga/learn/historyculture/ppie.htm (Accessed: 30.06.2026).
40. The Persian Palace // https://columbus.iit.edu/dreamcity/00034047.html (Accessed: 04.07.2026).
41. The San Francisco Call – newspaper (San Francisco, CA).
42. The Washington Post - Topakyan and the Taft rug, 21.01.2005 // https://www.washingtonpost.com/archive/local/2005/01/13/in-these-parts-republicans-have-company/e76b08e4-b7bb-4bd3-8a4c-b33bc9cd9de9/ (Accessed: 04.07.2026).
43. The Washington Post – newspaper (Washington, D.C.).
44. The Wilmington Dispatch – newspaper (Wilmington, NC).
45. Who was Mr. Topakyan? // https://bahai-education.org/sifter-star-of-the-west/people/mr-topakyan (Accessed: 04.07.2026).
46. **Zaccaria, M.** Missions Abyssines, L'Etiopia, la Grande guerra e la Conferenza della pace. – Roma, Viella s.r.l., 2024. Pp. 189.

Сдана / Հանձնվել է՝ 24.08.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 31.08.2026
Принята / Ընդունվել է՝ 07.09.2026